

ՄԵԿՆԱՐԿԵՅ ԻՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԻՊՐԱՅԻՄ ՌԱԻՍԻԻ ԵՐԿՕՐԵԱՅ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՐԻԱ



Չորեքշաբթի, 3 Մայիսին, Իրանի Նախագահ Իպրահիմ Ռաիսիին երկօրեայ պաշտոնական այցելության համար ժամանեց Սուրիա, ընկերակցությամբ քաղաքական և տնտեսական պատուիրակության:

Նախագահը քաղաքական և տնտեսական հարցերու շուրջ ընդլայնուած քննարկումներ պիտի ունենայ Սուրիոյ Նախագահին հետ, որուն աւարտին շարք մը համաձայնութիւններ պիտի կնքուին:



Իրանի Նախագահի պատուիրակութեան մաս կը կազմեն.

- Արտաքին գործոց Նախարար Զասան Ամիր Ապտուլահեան,
- Քաղաքաշինութեան եւ ճամբաներու Նախարար (Տնտեսական միացեալ յանձնախումբի Նախագահ) Միհրդատ Պազարպաշ,

- Պաշտպանութեան Նախարար Մուհամմետ Ռիտա Էշթեյէի,
- Քարիւղի Նախարար Ճաուատ Աուճի,
- Հաղորդակցութեան Նախարար Իսա Չարեհ Պոր,
- Նախագահական գրասենեակի պատասխանատու քարտուղար Ղու-

Շար.՝ Էջ 5 >

ՆԱԽԱԳԱՀ ԱՍՏՏ ԻՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՌԱԻՍԻԻ ՇԵՏ ՇԱՆԴԻՊՈՒՄԻՆ. «ՍՈՒՐԻԱ-ԻՐԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՅՈՒՆ ԵՆ ԵՒ ԱՄՐԱԿՈՒԻ՝ ՀԱԿԱՌԱԿ ՇՐՋԱՆԸ ՀԱՐՈՒՄՏԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ՓՈԹՈՐԻԿՆԵՐՈՒՆ»

Չորեքշաբթի, 3 Մայիս 2023-ին, Սուրիոյ Նախագահ Պաշարպ ալ-Ասատ ընդունեց Իրանի Նախագահ Իպրահիմ Ռաիսիին, որ Նախարարական պատուիրակութեան ընկերակցությամբ, պաշտոնական այցելութեան համար Սուրիա ժամանեց:

Նախագահ Ասատ Իրանցի իր պաշտոնակիցին հետ խորհրդակցական հանդիպումին ընթացքին շեշտեց. «Սուրիա-իրան յարաբերութիւնները բովանդակալից են, ունին հարուստ փորձառութիւն և տեսլական: Այս պատճառով ալ այս յարաբերութիւնները մնացին կայուն՝ հակառակ Միջին Արեւելքը հարուածած քաղաքական և ապահովական փոթորիկներուն»:



Իր կարգին Նախագահ Ռաիսի ըսաւ. «Սուրիան, իր կառավարութեամբ եւ ժողովուրդով, բազում դժուարութիւններ յաղթահարեց: Կարելի է ըսել, որ դուք՝ սուրիացիները, շրջանջեցիք այս դժուարութիւններն ու յաղթանակ արձանագրեցիք՝ հակառակ սպառնալիքներուն և տնտեսական

Շար.՝ Էջ 5 >

ՅԱԿՈՐ ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ. «ՄԵՆՔ ՉԵՆՔ ԿՐԵԱՐ ՆԱՀԱՆՁԵԼ ԱՐՅԱԽԻ ՀԱՐՅՈՎ, ՄԵՉԻ ՀԱՄԱՐ ԱՐՅԱԽԸ ԷԱԿԱՆ Է»

«Գանձասար» հետեւեալ հարցազոյցը ունեցաւ ԶՅԴ Բիւրոյի Ներկայացուցիչ, Հայ Դատի Կեդր. Խորհուրդի Նախագահ Յակոբ Տեր Խաչատուրեանի հետ, իր Հալէպ այցելութեան առիթով:

«Գանձասար»- 16-17 Ապրիլին Հալէպի մէջ տեղի ունեցաւ Հայ Դատի Միջին Արեւելքի յանձնախումբերու խորհրդածողովը: Ինչո՞ւ ընտրեցիք Սուրիան, որպէս ժողովի գումարման վայր:

Յակոբ Տեր Խաչատուրեան- Իրականութեան մէջ մենք երկու Նպատակ կը հետապնդէինք. առաջին՝ անհրաժեշտ էր, որ երկրաշարժէն անմիջապէս ետք ֆիզիքական Ներկայութիւն ունենալ սուրիահայ համայնքին մէջ, որովհետեւ բարոյական պարտք կը համարէինք, որ Բիւրօն իր ներկայութեամբ արժեւորէ կացութիւնը, տեսնէ սուրիահայութեան կարիքները, մասաւանդ երկրաշարժի աղէտէն ետք՝ այդ գօտիին մէջ յայտնուած ժողովուրդին իրավիճակը շօշափելու, ստանալու



Շար.՝ Էջ 4 >

ՀԱՄԱՃԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ 25-ՐԴ ՆԵՐԿԱՅՅԱՅՈՒՅՅԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԳՈՒՄԱՐՈՒԵՃԱՒ

Համազգային Հայ Կրթական և Մշակութային Միութեան Սուրիոյ Շրջանային 25-րդ Ներկայացուցչական ժողովը գումարուեցաւ Կիրակի, 30 Ապրիլ 2023-ին, «Սահակ Նալպաստեան» սրահէն ներս: Ժողովին կը մասնակցէին Պատկան Մարմինի ներկայացուցիչը, Համազգայինի Կեդրոնական



ՀԱԼԷՊ, 30 ԱՊՐԻԼ, 2023

Վարչութեան անդամը, Շրջ. Վարչութեան անդամները, «Ն. Աղբալեան», «Հ. Օհանջանեան», «Վ. Նաւասարդեան», «Լ. Շանթ» եւ «Ա. Ահարոնեան» մասնաճիւղերու լիազօր ներկայացուցիչները, Հայագիտական Հիմնարկի, «Բարսէլ Կանաչեան» երաժշտական, «Չուարթնոց» երգչախումբային եւ «Լեւոն Շանթ» թատերական միաւորներու ներկայացուցիչները եւ հրաւիրեալներ: Ժողովը քննարկեց անցնող տարեշրջանի Շրջանային Վարչութեան գոր-

հիւան

Համազգայինի Սուրիոյ Շրջանային 25-րդ Ներկայացուցչական ժողովի

Շար.՝ Էջ 5 >

Խմբագրական

ԻՐԱՆ-ՍՈՒՐԻԱ
ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՆՈՐ
ՄԱԿԱՐԴԱԿ ԿԸ ՆՈՒԱՃԵՆ

Իրանի նախագահ Բախսի Սուրիա այցելությունը երկու երկիրներու յարաբերություններու նոր մակարդակի բարձրացման մասին կը խօսի: Մակարդակ մը, ուր անոնք տարածաշրջանին մէջ ռազմավարական դաշնակիցներ կը դառնան:

Այս այցելությունը նախ հաստատում մըն էր դիմադրողական ճակատին տարած յաջողութեան: Երկրորդ՝ հաստատում մըն էր, որ Միջին Արեւելքի նոր քարտեզը կեանքի կոչելու արեւմտեան երկիրներու տասնամեակէ մը աւելի տարած աշխատանքը ի թերեւ էլած է փաստօրէն, որովհետեւ Սուրիան մասնատելու ծրագիրը ձախողութեան մատնուելով՝ արաբական շարք մը երկիրներու մասնատումը անհաւանական դարձած է արդէն:

Այս այցելությունը նաեւ շեշտադրում մըն էր Սուրիա-արաբական աշխարհի յարաբերություններու բարեկարգման կարելիութեան՝ Իրան-Սեւուտական Արաբիա յարաբերություններու կարգաւորման որպէս շարունակութիւն:

Տարածաշրջանը յարաբերություններու նոր փուլի մը ուրուագիծը կը սահմանէ: Յարաբերություններ, որոնք քաղաքական գարգացումներուն հետ զուգահեռաբար պիտի ընթանան:

Այս փուլին ականատեսը եղանք ու պիտի ըլլանք շարք մը երկիրներու հաշտութեանց՝ գերծ պահելու շրջանը յաւելեալ լարուածութենէ, վստահութեան մթնոլորտը վերականգնելու եւ վերջապէս յարաբերությունները գարգացնելով հասցնելու տնտեսական գործակցութեան մակարդակին:

Իրան-Սեւուտական Արաբիա գործակցութեան մէջ Իրան իր կողքին կը տեսնէ Սուրիան, պատրաստ է սատարելու Սուրիոյ վերականգնումի աշխատանքներուն եւ Սուրիոյ հետ տնտեսական յարաբերությունները բարձրացնելու երկու երկիրներու քաղաքական յարաբերություններու մակարդակին:

Սուրիա, իր կարգին, արաբական աշխարհի մուտք կը գործէ ոչ միայն պահպանելով Իրանի հետ իր յարաբերությունները, այլեւ ռազմավարական դաշինքի մակարդակին բարձրացնելով զանոնք:

Փաստօրէն Իրանը տարածաշրջանէն դուրս մղելու արեւմտեան շարք մը երկիրներու նկրտումները իրենց ազդեցությունը կորսնցուցած են: Փոխարէնը արաբական երկիրներ, Իրանի եւ Սեւուտական Արաբիոյ յարաբերություններու կարգաւորումը ողջունելով, տարածաշրջանին մէջ իրենց գործակցությունը ամրապնդելու եւ այդ գործակցությունը տնտեսական բարգաւաճման, ինչպէս նաեւ ապահովութեան ու փոխադարձ վստահութեան ծառայեցնելու աշխատանքին պիտի լծուին յառաջիկայ շրջանին:

Պատերազմի ողջ տարիներուն, Իրան գորավիզ կանգնեցաւ Սուրիոյ, այնպէս ինչպէս Սուրիան գորավիզ կանգնած էր Իրանին Իրան-Իրաք պատերազմին:

Այս փուլին, Իրանի եւ Սուրիոյ նախագահներու ռազմավարական երկարաժամկետ գործակցութեան համաձայնութեան ստորագրությունը պիտի ամրագրէ երկու երկիրներուն դիմադրողականությունը եւ գարգացնէ անոնց տնտեսությունը, դրականօրէն անդրադառնալով Սուրիոյ վերականգնումին, արաբական աշխարհի մէջ իր դերակատարութեան ամրագրումին, միեւնոյն ատեն պիտի նպաստէ տարածաշրջանին Իրան-արաբական աշխարհի յարաբերություններու գարգացման ու Իրանի, որպէս տարածաշրջանային ուժ, դերակատարութեան պահպանման:

«Գ.»

-Թունուսի արտաքին հարցերու եւ գաղթի նախարար Նապիլ Ամմար թունուսեան լրատուամիջոցի մը հետ ունեցած հարցազրոյցին ընթացքին



-Երկուշաբթի, 1 Մայիս 2023-ի գիշերուան ժամը 23:35-ին, Իսրայէլ Զալէպի հարաւարեւելեան բաժինէն բազմաթիւ հրթիռներ արձակեց Զալէպի Միջազգային Օդակայանին ուղղութեամբ, որուն հետեւանքով զինուոր մը նահատակուեցաւ, արձանագրուեցան 7 վիրաւորներ եւ նիւթական բազմաթիւ վնասներ: Յարձակումին հետեւանքով Զալէպի Միջազգային Օդակայանը ծառայութենէ դուրս եկաւ: Սուրիական հակաօդային պաշտպանութեան համակարգերը դէմ դրին հրթիռներուն եւ վար առին անոնց մեծամասնությունը:



-Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարությունը հանդէս եկաւ հաղորդագրութեամբ, որուն մէջ խստիւ դատապարտեց Իսրայէլի կողմէ Զալէպի Միջազգային Օդակայանին հրթիռակոծումը, յայտնելով, որ Սուրիան կը գզուեցնէ Իսրայէլը նման յարձակումներու կրկնութենէ:



Ն ա ի ա ր ա ր ու թ ի ն ը կրկին կոչ ուղղեց ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդին վերջ տալու Իսրայէլեան թշնամական քաղաքականութեան եւ յարմար պատիժի ենթարկելու զայն:

- Երկուշաբթի, 1 Մայիս 2023-ին, Սուրիոյ, Յորդանանի, Սեւուտական Արաբիոյ, Եգիպտոսի եւ Իրաքի արտաքին գործոց նախարարները Յորդանանի մայրաքաղաք Ամմանի մէջ գումարուած ժողովի աւարտին հանդէս եկան միացեալ յայտարարութեամբ, ուր իրենց զօրակցությունը յայտնեցին Սուրիոյ եւ անոր կառոյցներուն, որպէսզի վերջինս իր վերահսկողությունը տարածէ երկրի ողջ տարածքին վրայ եւ վերջ տայ զինեալ ահաբեկիչներու ներկայութեան, ինչպէս նաեւ կասեցնէ սուրիական ներքին հարցին օտար միջամտությունները:



Անոնք շեշտեցին Սուրիոյ, իրենց երկիրներու եւ ՄԱԿ-ի գործակցութեան ամրապնդումը սահմաններու ապահովութեան մարտահրաւերները դիմագրաւելու եւ ահաբեկչութեան դէմ դնելու համար:

-Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատ հրապարակեց 2023-ի «7» թուական օրենսդրական հրամանագիրը, որուն համաձայն Սուրիան ցնցած երկրաշարժէն տուժածներուն ազգային սնտուկ պիտի յատկացուի, անոնց նիւթական կարիքները ապահովելու որոշ չափանիշներու համաձայն:



Հայկական Լուրեր

ՍՈՐԻԱԶԱՅՈՒԹԵԱՆ ՕԺԱՆՂԱԿՈՒԹԵԱՆ ՔԱՆԱՏԱՅԻ ՄԱՐՄԻՆԻՆ ԿՈՂՄԷ 150 ՀԱՉԱՐ ԱՆՆ ՏՈՒՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅԱՒԻ ԵՂԱՍՏ ՍՈՐԻԱԶԱՅՈՒԹԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Շաբաթ, 29 Ապրիլ 2023-ին, Քանադայի ՅՕՄ-ի եւ անոր ուղեկից միութիւններուն ցանցերով, ինչպէս նաեւ լրատուական՝ «Հայ Հորիզոն», «Նոր Հայ Հորիզոն» եւ այլ հարթակներով հրապարակուեցաւ Սուրիահայութեան Օժանդակութեան Քանադայի Մարմինին աշխատանքը ամփոփող տեսերիզ մը՝ 6 Փետրուարին Սուրիոյ աղետալի երկրաշարժին հետեւանքով սուրիահայութեան մատակարարուած օժանդակութիւններուն մասին:

«Հայ Հորիզոն» հեռուստաժամի կողմէ պատրաստուած տեսերիզի առաջին բաժնով հանդէս եկաւ ՅՕՄ-ի Քանադայի Շրջանային Վարչութեան ատենապետ Լուսին ժամկոչեան Փալանճեան:

Այս շնորհակալական խօսքով հանդէս եկաւ ՀՀԳ Քանադայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Միւր Գարագաշեան, որ դրուատեց քանադահայ գաղութին լիաբուն մասնակցութիւնը սուրիահայութեան օժանդակութեան, ՅՕՄ-ին եւ ՀՀԳ Քանադայի Կեդրոնական Կոմիտէին առաջացուցած Սուրիահայութեան Օժանդակութեան Միացեալ յանձնախումբի կամաւորներուն եւ ամբողջական զօրակցութիւն յայտնեց սուրիահայ մեր քոյրերուն եւ եղբայրներուն:



Սուրիոյ երկրաշարժի Օժանդակութեան Քանադայի Մարմինի ատենապետ եւ ՅՕՄ-ի Քանադայի Շրջանային վարչութեան անդամ Անի Հոթոյեան ժողի հակիրճ բացատրութիւն մը տուաւ նշեալ Օժանդակութեան մարմինի կազմաւորման եւ նպատակին մասին, ապա անդրադարձաւ Քանադայի ամբողջ տարածքին անհատական կերպով եւ միութիւններու կողմէ եղած նուիրատուութեանց գործընթացին, որուն որպէս արդիւնք հանգանակուած էր 150.000 ամ. տոլար:

Անկէ ետք ցուցադրուեցան Քանադայի տարածքին կատարուած ձեռնարկներէն, միջոցառումներէն եւ աշխատանքներէն լուսանկարներ, որոնց բոլորին հասոյթները տրամադրուեցան վերոնշեալ մարմինի:

Տեսերիզի երկրորդ բաժնով վաւերագրական անդրադարձ մը կատարուած էր Հալէպի նախապատերազմեան մշակութային, ազգային-կրթական եւ հայապահպանման երկարամեայ փառահեղ ընթացքին, ապա պատերազմին եւ վերջերս գայն հարուածած աղետալի երկրաշարժին: Մանրամասն տեղեկագրութեամբ ներկայացուած են բոլոր այն ծառայութիւններն ու օժանդակութիւնները, որոնք տրամադրուած են մեր աղետալ ժողովուրդին, եւ որոնց իբրեւ ապաստան ծառայած են գաղութին հայկական կառոյցներու եւ եկեղեցիներու սրահները, ինչպէս նաեւ Սուրիահայ Օգնութեան հաշի կամաւորներուն եւ ընկերաբժշկական կեդրոնին մատուցած սննդամթերքի, սննդակոդովներու, հանդերձանքի, դեղորայքի, շտապ օգնութեան, նիւթական յատկացումներուն եւ այլ տեսակի գանազան օժանդակութիւնները, Հալէպի, Լաթաքիոյ եւ Զեսապի մէջ: Անդրադարձ կատարուած էր նաեւ այս ծիրէն ներս Բերիոյ Թեմի բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Աջքարեանի այցելութիւններուն:

ՍՕԽ-ի Շրջանային Վարչութեան ատենապետ Սիրան Ամպարճեան եւս լայնօրէն անդրադարձաւ ՍՕԽ-ի տարած աշխատանքներուն երկրաշարժին յաջորդած օրերուն, ապա յետերկրաշարժին՝ առաւել եւս կազմակերպուած ու ծրագրաւորուած կերպով աշխատելու գործընթացին: Ան իր խորին երախտագիտութիւնը յայտնեց աշխարհասփիւռ ՅՕՄ-ուիիններուն, որոնք ինչպէս միշտ, այս անգամ եւս զօրավիզ կանգնեցան աղետալ մեր գաղութի գաւակներուն:

Աւարտին Պատկան Մարմինի ներկայացուցիչ Վրէժ Եագուպեան գեկոյցով հանդէս եկաւ, որուն մէջ նախ յիշեց, թէ Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Վարչութիւնը առաջացուցած էր երկու յանձնախումբեր. առաջինը մասնագիտական երկրաչափերէ բաղկացած, որոնք այցելելով հայկական կալուածներն ու մեր ժողովուրդին տունները՝ պատրաստած էին տեղեկագիրներ, որոնց հիման վրայ կարգ մը տուններու նորոգութիւնները կատարուած են արդէն, իսկ քանդուած բնակարաններու ընտանիքներուն առայժմ ապահովուած են այլ բնակարաններ: Իսկ երկրորդը՝ երկրաշարժի Արտակարգ Վիճակի մարմինն էր, որ զբաղած էր երկրաշարժէն տուժած մեր ժողովուրդին կարիքները հոգալու հարցերով: Աւարտին ան իր շնորհակալական եւ երախտագիտական խօսքը ուղղեց յատկապէս ՅՕՄ-ի Քանադայի կառոյցին՝ իր ցուցաբերած աջակցութեան եւ օժանդակութեան համար:

Նշենք, որ Սուրիահայութեան Օժանդակութեան Քանադայի մարմինին օժանդակող միութիւններն էին Քանադայի ՅՕՄ-ի կառոյցը, ՀՀԳ Քանադայի Կեդրոնական Կոմիտէութիւնը, ՀՀԳ Արմէն Գարո Ուսանողական Միութիւնը, Համազգայինի Քանադայի շրջանը, ՀՀԳ ԶԵՄ-ն ու Պատանեկան Միութիւնը եւ ՀՄԸՄ-ի Քանադայի շրջանը:

12 Դեկտեմբեր 2022-էն ի վեր Շուշիի մատոյցներուն մօտ Ատրպէյճանի կողմէ Բերձորի միջանցքի շրջափակումը, դէպի Արցախ կազմի եւ Ելեկտրականութեան մատակարարումներու արգելափակումը, արցախահայութեան նկատմամբ անցնող ամիսներուն ահաբեկչական բնոյթի քայլերը ցարդ համարժեք հակադէմութեան չարժանացան Հայաստանի իշխանութեան:



Եւ միջազգային դերակատար ուժերու կողմէ: Այժմ ալ Ատրպէյճանը դիմած է Նոր սանձարձակութեան՝ սահմանային հսկիչ անցակէտ տեղադրելով Կոռնիձորի կամուրջի հատուածին մէջ:

Ակնյայտ է, որ Բերձորի միջանցքին մէջ ատրպէյճանական կողմի սարդիչ եւ սանձարձակ քայլերու նպատակը Արցախի հայաթափման ցեղասպան քաղաքականութիւնը առաջ մղելն է:

Ատրպէյճան շարունակ նորանոր պահանջներ կը ներկայացնէ եւ

սպառնալիքներ կ'ուղղէ Հայաստանի ու Արցախի հասցէին՝ այդ բոլորը զուգորդելով ուժ կիրարկելու սպառնալիքին հետ:

Ի տես այս իրողութեան, Հայաստանի ներկայիս իշխանութիւնը կը շարունակէ վտանգաւոր յայտարարութիւններով, խաղաղասիրական կեղծ թեզերով եւ յանցանքի համագործակցութեամբ փաստացիօրէն եւ այլեւս բացայայտ կերպով հրաժարիլ Արցախի եւ արցախահայութեան ապահովութեան, իրաւունքներու եւ շահերու երաշխաւորի իր սահմանադրական պարտաւորութիւններէն:

Աւելին, Հայաստանի ներկայիս իշխանութեան ապագային քաղաքականութիւնը Արցախի եւ Հայաստանի ապահովական հարցերու պարագային չէ միայն, որ կործանարար է: Փորձ կը կատարուի «Նոր դիտանկիւնէ» վերաբերուող, սակայն իրականութեան մէջ՝ արժեզրկելու ազգային-գաղափարական, ռազմավարական հիմնասիւնները: Շարունակաբար եւ հետեւողականօրէն կը թիրախաւորուին Հայ առաքելական Եկեղեցին, հայոց ազգային, մշակութային արժէքներն ու պատմութիւնը, բացայայտօրէն կ'ոտնակոխուին հայութեան անժամանցելի իրաւունքները, սերունդներու պայքարն ու ատոր արդիւնքները: Ցայտուն ապացոյցը Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի ամպիոնէն Հայաստանի Հանրապետութեան վարչապետին ելոյթն է, «պատմութեան ընկալման դիտանկիւնը, ընկերային-հոգեբանական ընկալումը» փոխելու անհրաժեշտութեան եւ իբրեւ թէ «հայրենասիրութեան մեր սեփական, մեր պետական մոտելի ստեղծման» առաջադրանքի մասին, սակայն իրականութեան մէջ Հայոց Ցեղասպանութեան միջազգային եզրոյթէն փաստացի հրաժարում է: Այս ճամարտականութիւնները ուրիշ բան չեն, եթէ ոչ թրջական տեսակետներուն տուրք տալ եւ Թուրքիոյ նախապայմաններու գոհացում՝ այսպէս կոչուած «առանց նախապայմաններու» «լիարժեք կարգաւորման ուղղուած» բանակցութիւններու գործընթացին մէջ:

Սեփական նախընտրական ծրագիրը ուրացած, սակայն ժողովուրդի մէկ հատուածը այդ ծրագրով մոլորեցնելու ճամբով իշխանութիւնը պահպանող քաղաքական ուժին ո՛չ ոք իրաւունք տուած է ապագայնացնելու եւ ինքնիշխանութենէն զրկելու մեր պետութիւնը:

Հայաստանի Հանրապետութիւնը Արցախին կապող միջանցքին մէջ ատրպէյճանական որեւէ անցակէտի տեղադրումը միանշանակ կերպով անընդունելի է, կը հակասէ միջազգային օրէնքին եւ որեւէ պարագայի չի կրնար ընտանքման առարկայ դառնալ:

Արցախը երբեք չէ եղած ու երբեք ալ պիտի չըլլայ Ատրպէյճանի կազմին մէջ:

ՀՀ Դաշնակցութիւնը, իր բոլոր կարելիութիւններով եւ հնարաւոր բոլոր հարթակներու վրայ, հետամուտ է ապահովելու միջազգային հանրութեան եւ պատկան կառոյցներու հասցեական գնահատականն ու համարժեք արձագանգը, ինչպէս նաեւ յայտարարութիւններէն անդին՝ գործօն քայլեր:

Մեր աչքերուն առջեւ է մեզի համար նախապատրաստուած աղետն ու արհաւիրքը: Ազգային ինքնապահպանութեան քնազող մեզ կը մղէ դէպի ըմբոստացում: Դիմադրութիւնը այլընտրանք չունի: Իւրաքանչիւր հայու պարտականութիւնն է նպաստել մեր փառապանծ բանակի հզօրացումին:

Վերջին տարիներուն ՀՀ Դաշնակցութիւնը բազմաթիւ անգամներ միասնականութեան եւ համախմբումի կոչ ըրած է, որ ցաւ ի սիրտ, յաճախ մնացած է անարձագանգ: Անգամ մը եւս կոչ կ'ուղղենք հայոց ազգային ուժերուն՝ մէկ կողմ ձգելու տարակարծութիւնները եւ հայրենիքի օրհասական այս պահուն՝ միաւորուելու, ներքին ու արտաքին վտանգը դիմագրակելու, պետութեան ինքնիշխանութիւնը պահպանելու եւ հզօր Հայաստան կերտելու համար:

ԿԱՐՕՏԸ ՈՒՆԻՄ



Սեան Ա. Մամեդյան

Տան բազկաթռչին վրայ նստած, գլուխս անոր բարձին հենած, բջիջա-
յին հեռախոսս ձեռքս առած, անոր էջերուն մէջ ման կու գամ:

Այ մօտ ու հեռու հարազատներու նկարներ, երբեմն ընկերներ եւ բարե-
կամներ, երբեմն ծանօթ թուացող դէմքեր, բայց տարիներու փոշիներու տակ
մնացած, մշուշով քողարկուած յիշողութիւնս ի վիճակի չէ, որ յիշէ անոնց
անունները ու ճանչնայ անոնց դէմքերը: Երբեմն անձեր, որոնց շատ կա-
րօտցած եմ, ու որքան կը փափաքէի, որ անոնք հիմա ինձի հետ ըլլային:
Երբեմն-երբեմն...

Նեղացած ու վրդոված բջիջային հեռախոսս կը փակեմ: Այ ոչ ոք կայ:
Այս բոլորը խաբկա՞նք էր...:

Սիրտս, միտքս ու հոգիս կ'ալեկոծին, անոնց ալիքները անգամ մը
ասդին, անգամ մը անդին գիս կը շար-
տեն, ու միտքս միայն մէկ բառ կը կըրկ-
նէ, կարօտը ունիմ-կարօտը ունիմ:



Կարօտը ունիմ մեր տան «հին»
շէն օրերուն, երբ մեր տան մէջ լսուած
խնդրուքի ձայները, տարբեր տաքուկ
մթնոլորտ մը կը ստեղծէին: Կարօտը
ունիմ նոյնիսկ մեր վիճաբանութեան
ձայներուն:

Կարօտը ունիմ մեր տան ճաշա-
սեղանին շուրջ հաւաքուած նըս-
տելուն: Առաւօտեան ամէն մէկը
շտապելով իր գործին կամ դպրոցին,
ճիշդ ժամանակին հասնելու հե-
տէն:

Քին: Ծաշին ընտանիքիս անդամներուն տարբեր-տարբեր ժամերու, սեղան
նստելուն, երբ մայրս առանց դժկամելու, իւրաքանչիւրիս, ուրախութեամբ
կրկին սեղան կը պատրաստէր:

Կարօտը ունիմ տօնական օրերուն, երբ մեր խօսակցութիւնները կը խա-
չածեուէին ու մէկը միւսին լսելու դժուարութիւն կ'ունենայինք: Կարօտը
ունիմ խնդալու, խօսելու, հին յիշատակներ, իւրայատուկ թէ սովորական
յուշեր պատմելու:

Կարօտը ունիմ մեր տան մէջ ուրախ-գուարթ խօսակցութիւններուն:
Եւ այն անձերուն, որոնք իրենց մտահոգութիւններն ու գործերը մոռցած,
անկեղծ ու անհոգ ժամեր կը վայելէին:

Կարօտը ունիմ տան մէջ իրարու մտահոգութիւնները բաժնող անձերուն,
որոնք կը թեթեւցնէին, տրամադրութիւնը լիովին փոխելով եւ կրկին ոտքի
կանգնեցնելով, որպէսզի կենքը շարունակէր:

Կարօտը ունիմ, անհանգիստ օրերուն հարազատի մը գուրգուրոտ
ձեռքին, որ ուսիս թափ տալով, «ցաւդ տանիմ» ըսէր, ու շուարեր ի՞նչ ըներ,
որ լաւ ու հանգիստ զգայի:

Կարօտը ունիմ տօնական օրերուն մեր տան եռուզեռին, երբ տան դու-
ռը հազիւ փակուած զանգը կրկին կը հնչէր, ինչպէս նաեւ հարազատներու
այցելութիւններուն ու անոնց սրտանց ողջագուրումներուն:

Շատ լսած էի կարօտախտի մասին, բայց լսելը տարբեր բան է, դուն

Շար.՝ Էջ 7 >>

ՍԵՐԸ ԸՆՏՐԵՆՔ



Խորեն Զինյ. Պերթոլեան

Սիրելի ընտրել է:
Ընտրել բարին՝ առանց ետ դարձի
Ընտրել ճշմարիտը՝ առանց կասկածի
Ընտրել բնականը՝ առանց կեղծիքի
Ընտրել մարդկայինը՝ առանց պայմանի
Ընտրել ներկան՝ կամքով պայքարի
Ընտրել այսօրը՝ ի խնդիր ՄԵՆԶի
Ընտրել գարուններ Ծաղկազարդի
Ընտրել Յարութիւն երթովը խաչի
Ընտրել սեր, երբ կայ խաւարասեր, երբ կայ եսասեր, երբ կայ շահամոլ:
Ընտրել՝ սերը անսահման, նոյնիսկ երբ սահմանափակ միտքեր կան:
Ընտրել՝ սերը Յիսուսի, նոյնիսկ եթէ արծաթասեր Յուդաներ կան:
Ընտրել՝ սերը որպէս մնայուն ընկերակից, այն ատեն տառապեալ
աշխարհին մէջ պիտի ըլլաս սիրոյ առաքեալ:

Սերը ապրելակերպ է:
Սիրել անսակարկ՝ առանց ակնկալիքի
Սիրել անմիջական՝ առանց ձգձգումի
Սիրել առիթ տալով յաճախակի
Սիրել շարունակ՝ առանց արձակուրդի
Սիրել հարազատ՝ առանց դիմակի
Սիրել սրտաբուխ՝ առանց սպասումի
Սիրել բառերով հոգեշահ ոսկի
Սիրել գործով խօսուն օրինակելի:
Սերը վերածել մնայուն սկզբունքի
Սեր սերմանել տեսիլքով հունձքի
Սեր ցուցաբերել վայելուչ եզակի
Սեր արտայայտել օրինանքով հրաշալի:
Սիրոյ հետքերը միշտ անջնջելի
Սիրոյ կանչը քաղցրաձայն լսելի
Սերը սուրբ է, սրբագան ուղի:
Սիրողին կեանքն է օրհնեալ Կիրակի
Սիրողին ընթացքն է յոյժ գովելի:
Տերը պատուիրեց սիրել խիղճով բարի
Սիրել եսով ի պատիւ ՄԵՆԶի
Սիրել ապրելով ներկան տագնապալի:
Սիրով արշալոյսի նշոյլն է խրախուսելի
Սիրով խաչի բեռը կ'ըլլայ տանելի
Սիրողին կեանքն է ազդու եւ անթաղելի:
«Աստուած սեր է» (Ա.Յհ 4.16): Իր սիրով սրբարար մեղքը կը ձգենք
մէկդի:
Սերը ընտրենք խոր հաւատքով եւ վառ յոյսով, այն ատեն կը դառնանք
վկան առաքինի վարքի:

(Յեղափոխ)

Երիտասարդական Ուպնեակ

ՀԱՅՐԵՆԻՔ

Հայրենիք կայ բանտ է, հայ-
րենիք ալ կայ՝ կեանք, ազատու-
թիւն ու թելեր կը պարզուէ թռչելու:

Մարդիկ երբեմն իրենց իսկ
հայրենիքին մէջ այնքան տառա-
պանքի, դժուարութիւններու
կը մատնուին, որ անոր քաղաքներն
ու գիւղերը կը սկսին նմանիլ բան-
տերու, որոնց ցանկապատերը
այնքան բարձր ու փշոտ կ'ըլլան,
որ մարդ կը խուսափի ձերբազատիլ անոնցմէ:



Բայց հայրենիքը բանտի կամ դրախտի վերածողը մարդն է կրկին:
Վերջապէս հայրենիքի գաւազնէրը պիտի արժեւորեն իրենց պապե-

նական երկիրն ու կեանքի որակը անոր մէջ:
Ու հայրենիքը պիտի օրհնէ, պատմութեան էջերուն մէջ արձանագրէ
իր այն գաւազններուն անունները, բնականաբար, որոնք քաջութիւն ունին,
նոյնիսկ վտանգը դիմագրաւելով, ազատելու հայրենիքն ու իրենց անձերը
բանտի ճաղերէն:

Հայրենիքին սրբութիւնը կ'աղաւաղի, երբ գայն ղեկավարողները շքեղ
պալատներու, հսկայական դահլիճներու մէջ, ոսկեզօծ բաժակներով իրար
կենաց կը խմեն ու սառնասրտութեամբ կը դիտեն ժողովուրդին տանջանքն
ու տառապանքը:

Հայրենիքը այն հանգիստ տարածքն է, ուր մարդ կ'ապրի վայելելով
իր իրաւունքները, կարենալով արտայայտել իր ազատ կամքը, ազատօրէն
դէմ դնելով բռնակալութեան, պայքարելով ժողովուրդին, ոչ թէ անոր ժա-
մանակաւոր տերերուն կամքը կատարելու համար:

Ազատութիւնը անասուններու աշխարհին մէջ կը պահուի ատամնե-
րով: Մարդիկ ալ ազատութեան համար արիւն կը թափեն, ձայն կը բարձ-
րացնեն, կուրծք կու տան կաշկանդումներուն: Իսկ եթէ մարդուն ազատու-
թիւնը խաբուսիկ է, ան իր իսկ հայրենիքին մէջ կը նմանի այն թռչունին, որ
բանտարկուած է շքեղ տան մը անկիւնը տեղադրուած վանդակի մը մէջ: Անոր
ուտելու ժամն ու որակն անգամ տերը կը ճշդէ, ազատութենէն բացի ամէն
բան կը տրամադրուի իրեն: Ան տեւաբար կ'երագէ անծայրածիր հորիզոն-
ներ թռչիլ, ազատութեան մաքրամաքուր օդը շնչել, բայց առանց պայքարե-
լու կը հեռանայ կեանքէն՝ փակ, բայց շքեղ վանդակի մը մէջ:

ՀՄԸՄ-Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ Բ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԱՄԱՐՏԵՑ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ

Երկու օրուան վրայ երկարած նիստերից ետք, ՀՄԸՄ-ի երիտասարդական Բ. համագումարը իր աշխատանքները յաջողությամբ ավարտեց Նիկոսիոյ մէջ, Կիպրոս:

Պաշտօնական բացման հանդիսութենէն ետք, Ուրբաթ, 28 Ապրիլի կէսօրին, համագումարը անցաւ իր առաջին օրուան աշխատանքներուն եւ տեսանկյունով լսեց վկայութիւնները երիտասարդական Ա. համագումարի (Աթէնք, Մայիս 2019) խումբ մը մասնակիցներու: Ապա կազմեց իր դիւանը եւ աշխատանքային յանձնախումբերը:



Այնուհետեւ համագումարը լսեց երեք նիւթեր եւ կատարեց համապատասխան քննարկումներ. -

«ՀՄԸՄ-ի առաքելութիւնը երէկ եւ այսօր»- ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Վաչէ Նաճարեան:

«Հայ երիտասարդութիւնը իր տագնապներով եւ սպասումներով»- Կիպրոսի Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Խորէն Արք. Տողրամաճեան:

«ՀՄԸՄ-ի կառուցային, կազմակերպական, դաստիարակչական, քարոզչական մօտեցումները որքանո՞վ կը պատշաճին մերօրեայ երիտասարդութեան ակնկալութեան»- ՀՄԸՄ-ՅԵՄ-ի վարչութեան ատենադպիր Յակոբ Գազանճեան:

Երիտասարդական համագումարին երկրորդ օրը յատկացուեցաւ ՀՄԸՄ-ի երիտասարդական ծրագիրներու ներկայացման, արժեւորման ու քննարկման: Կատարուեցան աշխատանիստեր եւ ընդհանուր նիստեր: Նիւթերը ներկայացուցին. -

«ՀՄԸՄ-ի երիտասարդական գործունեութեան շրջագիծը. քննարկում երիտասարդական ուղեգիծի»- ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ Օշին Փիրումեան:

«ՀՄԸՄ-ի երիտասարդական ուղեգիծը եւ նոր գործադաշտերու կարելիութիւնները»- ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան ատենադպիր Վիգէն Աւագեան:

Յայտնենք, որ համագումարին երկրորդ օրը, մասնակիցներուն այցելեց եւ Կիպրոսի ու կիպրոսի հայութեան մասին պատմական ու այժմեական տեղեկութիւններ փոխանցեց Կիպրոսի հայ համայնքի ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան:

Աւարտին, համագումարին մասնակիցները ընտրեցին իրենց ներկայացուցիչները, որոնք երիտասարդութեան առաջարկները, ակնկալութիւնները եւ սպասումները պիտի փոխանցեն ՀՄԸՄ-ի Պատգամաւորական ԺԳ. Ընդհանուր Ժողովին, որ տեղի պիտի ունենայ Յունիստեմբեր 2023-ին, Հայաստան: Համագումարին ներկայացուցիչները Ընդհանուր Ժողովին պիտի մասնակցին խորհրդակցական ձայնով:

ԿԻՊՐՈՍԻ ՆԱԿՏԱԿԱՑ ԴԱՄԱՐԱՆԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ



Շաբաթ, երեկոյեան ժամը 6:00-ին, համագումարի աշխատանքներու ավարտէն ետք, ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան եւ ՀՄԸՄ-ՅԵՄ-ի վարչական անդամներու գըլխաւորութեամբ, մասնակիցները այցելեցին Թիմօ, Կիպրոսի Նահատակաց յուշակոթող, ուր յարգանքի իրենց տուրքը մատուցեցին 1974-ին, Թուրքիոյ Կիպրոս ներխուժման օրերուն Նահատակուած Յունաստանի եւ Կիպրոսի յոյն զինուորներու յիշա-

տակին: Տեղի ունեցաւ դափնեպսակի գետեղում եւ յունարէն խօսքի արտասանութիւն:

ՎԱՐԴԳԵՍ ՄԱՐՏԵՍԵԱՆԻ ՊԱՐԳԵՒՏՐՈՒՄ

Նոյն օրը, երեկոյեան, ի պատիւ համագումարի մասնակիցներուն կազմակերպուած ՀՄԸՄ-ՅԵՄ-ի ճաշկերոյթին, ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութիւնը անակնկալ մը հրամցուց ներկաներուն, երբ միութեան «Արտակարգ» շքանշանով պարգեւատրեց Կիպրոսի պետական համայնքի ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանը՝ ՀՄԸՄ-ի աշխատանքներուն իր մնայուն եւ սերտ աջակցութեան համար:



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԵՒ ԵՂԵՆԻ ՆԱԿՏԱԿԱՑ ՅՈՒՇԱՐՁԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Կիրակի, 30 Ապրիլի կէսօրին, ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութիւնը ներկայացնող քառանդամ պատուիրակութիւն մը, բաղկացած ատենապետ Վաչէ Նաճարեանէ, անդամներ Վիգէն Աւագեանէ, Թալին Օրտոլլեանէ եւ Օշին Փիրումեանէ, այցելեց Ազգային Առաջնորդարան եւ հանդիպում մը



ուսեցաւ թեմի կաթողիկոսական փոխանորդ Խորէն Արք. Տողրամաճեանի հետ: Տեղի ունեցաւ երախտիքի եւ գնահատանքի յուշանուէրի յանձնում:

Ապա Կեդրոնական Վարչութեան անդամները, ՀՄԸՄ-ՅԵՄ-ի Վարչութիւնը եւ համագումարին մասնակիցները այցելեցին Հայոց Տեղասպանութեան Նահատակաց յուշարձան, ուր ՀՄԸՄ-ի անունով գետեղեցին ծաղկեպսակ մը: Համագումարի մասնակիցներուն կողմէ արտասանուեցաւ ոգեկոչական խօսք:

«ԳԱՆՁԱՍԱՐ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

Խմբագիր՝ Զարմիկ Զիւլբոջեան-Պողիկեան
Սրբագրիչներ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան
Վեհան Պարսումեան

Ձեւաւորող՝ Յովսէփ Զալոյլեան
Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան
Վրաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարէն Պապեան-Աղայեկեան
Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պողոսեան
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիւլբոջեան
Հաշուապահ՝ Յովիկ Պարսումեան 0957 953 811

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով, կապ հաստատելով թերթիս հաշուապահին հետ:



Ռաֆֆի Սիկանյան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՑ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵՆՏՐՆ

-Սուրիոյ պասքեթի աղջկանց Բ. դասակարգի մրցումներու շրջագիծէն ներս, ՅՄԸՄ-ի աղջկանց կազմը 66 – 63 արդիւնքով պարտութեան մատնեց Դամասկոսէն ժամանած ճէյշը:

-Սուրիոյ պասքեթի տղոց Բ. դասակարգի ախոյեանութեան աւարտին, Դամասկոսի ալ Սաուրա խումբը բարձրացաւ Ա. դասակարգ՝ աւարտական հանդիպումին 73 -57 արդիւնքով պարտութեան մատնելով ՅԵԸ-ը:



-Սուրիոյ ֆութպոլի Ա. դասակարգի ախոյեանութեան մրցումներուն Յալէպի ալ Աիլին ձախողեցաւ յաղթական աւարտել ճապլէյի հետ մրցումը, որ աւարտեցաւ 1-1 հաւասարութեամբ. ճապլէն իր կողմը նշանակեց մրցումի 93-րդ վայրկեանին: Շաբթուան անակնկալ արդիւնքներէն մէկը եղաւ Նաեւ Ուասայէյի ձախողութիւնը, որ 2 – 0 արդիւնքով գիջեցաւ աղիւսակին վերջին դիրքը գրաւող Մաճըտին: Յոմսի Քարամէն 2 – 1 արդիւնքով յաղթեց ճէյշին, ինչպէս նաեւ Նոյն արդիւնքով Ֆըթուէն յաղթեց Ուահտէյին:

-Դամասկոսի ճէյշ խումբի մարզիչ Այման ալ-Յաքիմ վերջին մրցումին պարտութեան մատնուելէ ետք ներկայացուց իր հրաժարականը: Յաքիմը փոխարինեց Անաս Մախլուֆը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՌԵԱԼ ԿԸ ԲԱՆԱԿԿԵՑ ԶԵՅՏԱՆԻ ՅԵՏ



Սպանիոյ ախոյեան Ռեալ Մատրիտի վարչակազմը սկսած է բանակցութիւններ վարել կազմի նախկին խաղացող եւ մարզիչ Զէնատտին Չէյտանի հետ՝ անոր վստահելու կազմի մարզիչութեան պաշտօնը: Այս մասին յայտարարութիւններ կատարեցին ֆրանսական լրատուամիջոցները: Ըստ տուեալներուն, Ռեալի ներկայ իտալացի մարզիչ Գարլօ Անչէլոթի շրջանի աւարտին պիտի մարզէ Պրազիլի հաւաքականը: Յիշենք, որ Չէյտան արքայական ակումբը մարզած է 2016-2018 եւ 2019 – 2021 թուականներուն եւ անոր հետ արժանացած է բազմաթիւ տիտղոսներու:

ՄԱՆՉԵՍԹԵՐ ՍԻԹԻՆ ԳԼԵԱՎՈՐԵՑ ԱՆԳԼԻՈՑ ԱՐԻՄԱԿԸ

Անգլիոյ ախոյեանութեան 34-րդ փուլի աւարտին, Մանչեսթըր Սիթին դժուար յաղթանակ մը արձանագրելով 2 – 1 արդիւնքով պարտութեան մատնեց Վոլիամը եւ յաջողեցաւ ձեռք ձգել աղիւսակին առաջնութիւնը: Զանդիպուով կողմը նշանակեցին Իրլինկ Յալաստն ու Ճոլլեան Ալվարթը, իսկ Վոլիամի միակ կողմի հեղինակը դարձաւ պրազիլցի Վինիսիոսը: Աւելցնենք, որ Յալաստ Նոր մրցանիշ մը արձանագրելով իր կողերուն թիւը բարձրացուց 34-ի:



ԽԱԶԲԱՌ (ՄԻ 436)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	■											
2								■			■	
3			■									■
4				■			■			■		
5			■				■					
6	■								■			
7		■		■								■
8				■					■		■	
9		■				■						
10				■		■					■	
11	■								■			
12								■		■		■

Հորիզոնական

- 1- Մատթէոս, Մարկոս եւ Դուկաս Աւետարաններուն տրուած անունում:
- 2- Նորութիւն յառաջ բերող: Հակառակ՝ ժխտական նախածանց:
- 3- Հարցական դերանուն: Հպարտ:
- 4- Հակառակ՝ երկինչիւն: Եական բայ:
- 5- Հակառակ՝ 4500: Տղամարդ: Մարմիկը՝ մէջքէն վեր, առանց թելերուն ու գլուխի:
- 6- Նահանջել: Տառի մը անունը:
- 7- Իսկական:
- 8- Ամբողջ: Ֆրանսական քաղաք:
- 9- Ժխտական նախածանց: Աւանդել:
- 10- Աղբ: Ձայնաւոր տառեր:
- 11- Արիւն ծծող որդ: Հակառակ՝ գրաբար «օր»:
- 12- Գոհացուցիչ:

Ուղղահայեաց

- 1- Նշենիի պտուղ: Կափարիչ:
- 2- Աւետիս Ահարոնեանի թատերգութիւններէն «Արցունքի»:
- 3- Տարածքի միաւոր: Բաղաձայն տառեր:
- 4- Ոչ ամբողջական: Տառի մը անունը:
- 5- Զառ: Հակառակ՝ 5300: Տոպրակ:
- 6- Ամուսինի եղբոր կինը: Ձայնաւոր տառեր:
- 7- Իգական անուն: Երեկոյ:
- 8- Տախտակամած:
- 9- Թափանցիկ, դիրաբեկ ու կարծր նիւթ:
- 10- Գոյութիւն ունին: Անկարող:
- 11- Ցուցական դերանուն: Հակառակ՝ շաղկապ:
- 12- Իրերայաջորդ տառեր: Իգական անուն: Հայ երգչուհի:

ԽԱԶԲԱՌ (ՄԻ 435)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	լ	ա	ր	ա	տ	հ	ա	ն	դ	■		
2	մ	ա	ր	ի	ր	է	ւ	ն	ր	ա		
3	ա	հ	լ	ա	պ	ա	տ	ա	ն			
4	ն	կ	ա	ն	կ	ա	ր	կ	ա			
5	■	ւ	ն	ա	յ	տ	ծ	ա	զ			
6	ն	ի	ա	ն	ի	ա	ն	ն	ա			
7	ա	յ	ր	ր	պ	ա	ր	ս				
8	կ	ր	փ	ա	ա	ր	ա	ր	տ			
9	ի	տ	ի	ր	ր	ա	ն					
10	ր	է	ն	ա	ն	ն	ն					
11	ճ	ա	ճ	ա	ն	յ	ւ	յ	ա	ր		
12	կ	կ	ա	ր		ծ	ա					

ԼՈՒՐԵՐ



